ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3310-Ա « 02 » հուլիսի 2026 թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ Հ.9 ՀԱՍՑԵՈՒՄ /ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.44/ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գագիկ Սարգսյանի դիմումը՝ Սիլիկյան թաղամասի 4-րդ տեղամասի հ.9 հասցեում /Սիլիկյան թաղամաս 3-րդ փողոց հ.44/ գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի Հ-12430 արխիվային տեղեկանքը, Սպանդարյան կոլտնտեսության 1990 թվականի հունիսի 28-ի հ.3 արձանագրության հ.2 քաղվածքը, հարևան հողօգտագործողների հայտարարությունները և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.ԱՏ-23082024-01-0920 տեղեկանքը:

Հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ Սիլիկյան թաղամասի 4-րդ տեղամասի հ.9 հասցեում /Սիլիկյան թաղամաս 3-րդ փողոց հ.44/ գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 400.0քմ, որքան ամրագրված է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի Հ-12430 արխիվային տեղեկանքում և Սպանդարյան կոլտնտեսության 1990 թվականի հունիսի 28-ի հ.3 արձանագրության հ.2 քաղվածքում:

Քննարկվող՝ 400.0քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի հունիսի 22-ի հ.Դ-52142-26 եզրակացությունը և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 2026 թվականի մայիսի 20-ի հ.28/66453-26 գրությունը.

1.Սահմանել, որ Սիլիկյան թաղամասի 4-րդ տեղամասի հ.9 հասցեում /Սիլիկյան թաղամաս 3-րդ փողոց հ.44/ գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները որոշվում են 400.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ